Արձանագրություն N 3

ԾՔ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/8 ծածկագրով ՀՄԱ ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ջրահեռացման ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Ծաղկաձոր 04 դեկտեմբերի 2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի
անդամներ՝ Ն.Խաչատրյան /բացող/
Ն.Սիմոնյան/բացող/
Ա.Մեսրոպյան/գնահատող/
Է.Հովհաննիսյան/գնահատող/
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 26-րդ կետի 1-ին մասը՝ հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության պատճառով /գտնվում է հերթական արձակուրդում/ նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Ն.Խաչատրյանը:

1. **Ճշտված փաստաթուղթ ներկայացնելու և սահմանված պահանջներին դրա համապատասխանության մասին**

(Ն.Խաչատրյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում <<Բագրատունի>> Ա/Կ-ն ներկայացրել է ճշտված հավելված 2.1՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 41-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Համապատասխանում է <<Բագրատունի>> Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտը:
Նախնական տվյալներով՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Բագրատունի>> Ա/Կ-ին (միակ մասնակից):

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps.am համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո /Evaluation/ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում կատարել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

1. **Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի դեկտեմբերի 06-ին, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի
անդամներ՝ ----------Ն.Խաչատրյան
----------Ա.Մեսրոպյան
----------Է.Հովհաննիսյան
----------Ն.Սիմոնյան
քարտուղար՝----------Ա.Ավետիսյան